

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
25 դեկտեմբերի 2015 թ.
Պետական գրանցման թիվ 11815507

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

11 դեկտեմբերի 2015 թ.
ք. Երևան

N 886-Ն

17 դեկտեմբերի 2015 թ.
ք. Երևան

N 1041-Ն

Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

**2016 ԹՎԱԿԱՆԻՆ ԸՍՏ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԹՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԻ
ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման 2-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. Հաստատել 2016 թվականին ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի՝
 $Ըզ = Մթ \times Սզ + Պզ + ՏՄթ \times ԱՕք \times ՄՆզ + ՀՈԻ-ՀՄթ \times 0.1 \times ՄԱդզ$, գործակիցները, հետևյալ չափերով.

Սզ՝ մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը՝ 124000 դրամ,

Պզ՝ հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը՝ մինչև 100 աշակերտ ունեցող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար՝ 19000.0 հազ.դրամ (ներառյալ ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդը): 101-ից մինչև 300 աշակերտ ու 301 և ավելի աշակերտ ունեցող պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը բաղկացած է 2 մասից՝ հաստատության պահպանման ծախսերից՝ 3727.5 հազ. դրամ, և ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի տարեկան ֆոնդից, որը հաշվարկվում է, հիմք ընդունելով սույն հրամանի 2-րդ կետում նշված՝ ոչ ուսուցչական անձնակազմի նվազագույն հաստիքների թվաքանակը:

ԱՕք՝ աշխատանքային օրերի քանակը՝ 168 օր,

ՄՆզ՝ տարրական դասարանների և նախակրթարանների երեխաներին սննդով ապահովման մեկ օրվա գումարը՝ 140 դրամ,

ՄԱդզ՝ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարի փոխհատուցվող գումարը՝ միջին մակարդակում սովորողների մասով՝ 5342.3 դրամ, ավագ մակարդակում սովորողների մասով՝ 6059.9 դրամ:

2. Հաշվարկը կատարելիս՝ կիրառվում են գործակիցներ հանրակրթական դպրոցի տարրական, միջին և ավագ մակարդակների համար, մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկելով՝ տարրական մակարդակի համար՝ 0.8075 գործակցով, միջին մակարդակի համար՝ 1.1224 գործակցով, ավագ մակարդակի համար՝ 1.1628 գործակցով: Միաժամանակ, կիրառվում են լրացուցիչ գործակիցներ բարձր լեռնային, լեռնային բնակավայրերի և միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող, ինչպես նաև ավագ դպրոցների համար, մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկելով բարձր լեռնային բնակավայրերի

դպրոցների համար՝ 1.13 գործակցով, լեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.04 գործակցով, միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 1.2 գործակցով, ավագ դպրոցների համար՝ 1.6083 գործակցով: Աշակերտների թվաքանակից ելնելով՝ ոչ ուսուցչական անձնակազմի նվազագույն հաստիքների թվաքանակը կազմում է՝ մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ մինչև 9, 101-ից մինչև 300 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ մինչև 12, 301 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 15.5:

3. Որպես հաստատության սովորողների թիվ՝ Սթ, ընդունվում է աշակերտների միջին տարեկան թվաքանակը, որը ենթակա է ճշտման ուսումնական տարվա սկզբին, հաշվի առնելով դասարանների փաստացի կոմպլեկտավորումը, ՏՄԹ՝ հաստատություններում տարրական դասարաններում սովորողների և նախակրթարանների երեխաների միջին տարեկան թվաքանակը, որը ենթակա է ճշտման ուսումնական տարվա սկզբին, ՀՈԻՀՄԹ՝ հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների (բացառությամբ տարրական դասարանների) թիվն ուսումնական տարվա սկզբին:

ՀՀ ֆինանսների նախարար
Գ. Խաչատրյան

ՀՀ կրթության և գիտության նախարար
Ա. Աշոտյան